Խորամանկը չուզեց ինձ հետ անկեղծ լինել: Իմ կատարած դերը իմ ընկերների գործողութիւնների մէջ՝ սաստիկ ծիծաղելի էր: Ինձ վիճակուած էր միշտ գործ ունենալ մանրների հետ, իսկ այդ մանրիկներն անգամ ինձանից շատ բան թաքցնում էին:

Հիւբբին իր փոքրիկ մատիկներով զննում էր գաւազանի գլուխը, փորձելու համար, արդեօք լաւ էր ամրացրած, թէ ոչ:

— Ի՞նչ կայ դրա մէջ, — հարցրի նրանից:

— Ի՞նչ պէտք է լինի, ոչինչ չկայ, — պատասխանեց նա:

Ես հաւատացած էի, որ այդ սեւ օձը կրում էր իր փորում պատասխանը այն թղթի, որ այսօր Ասլանը իմ աչքի առջեւ դուրս հանեց նրա փորից, կարդաց, յետոյ այրեց: Ես հաւատացած էի, որ Հիւբբին գիտէր, այդ, բայց նա ինձ ոչինչ չասաց:

— Ի՞նչ կանէիր, եթէ այդ գաւազանը ճանապարհին խլէին քո ձեռքից, — հարցրի նրանից:

— Ո՞վ կարող է խլել, — պատասխանեց նա ինքնավստահ ժպիտով, — ես նրան իսկոյն կը թունաւորէի: Չէ՞ ս իմանում — ախար դա կծում է, նայի՛ր:

Նա մատներով հուպ տուեց օձի պարանոցը եւ, իրաւ, նա սկսեց իր լայն բերանը բացուխուփ անել եւ սլաքի նման լեզուն շարժել: Եթէ ես չգիտենայի, թէ դա արհեստական է, ինձ վրայ եւս սոսկալի տպաւորութիւն կը գործէր, ուր մնաց միամիտ անձանց, որոնք մի առանձին սնահաւատութեամբ են վերաբերւում դէպի օձերի եւ թովիչների գործողութիւնները:

Ասլանը, վերջացնելով իր խօսակցութիւնը պառաւի հետ, մօտեցաւ Հիւբբիին, դարձեալ գրկեց նրան, համբուրեց եւ խիստ զգացուած ձայնով ասաց.

— Գնացէ՛ք բարեաւ... Տէր ընդ ձեզ...

— Մնա՛ք բարեաւ... — ասաց Հիւբբին եւ միացաւ պառաւի հետ:

Մենք բաժանուեցանք: Բայց այդ բաժանումը այնքան սրտաշարժ էր եւ զգալի, որ ես չկարողացայ զսպել իմ արտասուքը: Ասլանը նոյնպէս շատ յուզուած էր: Կրակի մօտ կանգնած, երկար նայում էինք այդ գիշերային ուղեւորների ետեւից, մինչեւ նրանք բոլորովին անհետացան խաւարի մէջ: Խե՜ղճ աղջիկ... Խե՜ղճ պառաւ, ինչի՞ համար էր այդ անձնազոհաթիւնը... որպիսի՞ ճակատագրական մռայլ խորհուրդ ստիպում էր յանձն առնել մի այդպիսի մռայլ գործ, որ թաքնուած էր մթութեան մէջ... Այն ի՞նչ գերբնական զօրութիւն էր, որ առաջնորդում էր մի զառամեալ կնոջ եւ մի դեռահաս աղջկայ՝